Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՃՏ 2019: «Կապանի թիվ ութ նախադպրոցական ուսումնական հաստատության վերանորոգման» ծրագրի եզրափակիչ արարողություն

2023թ. հունիսի 21-ին Կապանի թիվ ութ նախադպրոցական ուսումնական հաստատությունում տեղի ունեցավ «Կապանի թիվ ութ նախադպրոցական ուսումնական հաստատության վերանորոգման» մինչև 85,691 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Կապան համայնքի ղեկավար պարոն Գևորգ Փարսյանը և Կապանի թիվ ութ նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն տիկին Նունե Ջհանգիրյանը, ինչպես նաև շահառուներ, այդ թվում՝ նախադպրոցական հաստատության սաները, ծնողները և ուսուցիչները/աշխատողները:

Ծրագիրն իրականացվել է նախադպրոցական ուսումնական հաստատության կրթական միջավայրը շենքի վերանորոգման միջոցով բարելավելու և Կապան քաղաքում նախադպրոցական կրթության որակի բարձրացման նպատակով: Արդյունքում մոտ 380 մարդ օգտվում է ծրագրից:

Վերանորոգված շենքը

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Կատարում երեխաների կողմից

Շրջայց նախակրթարանի ներսում

Մեդիա: https://news.am/arm/news/766975.html

https://www.syunik.tv/archives/26635?doing_wp_cron=1687520628.7154350280761718750000